ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 501-Ա

09 սեպտեմբերի 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐԱՏՈՒՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵԿԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Նորատուսի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության 2025-2026 թվականների մեկամյա զարգացման ծրագիրը:

09.09.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք.Գավառ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ _____

«09» 09 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐԱՏՈՒՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2025-2026 թվականների

ՄԵԿԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագիրը կազմող՝ «Նորատուսի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ տնօրեն՝ Գ. Գրիգորյան

2025թ.

<<Նորատուսի ԲԱ >> ՊՈԱԿ-ը գտնվում է Գեղարքունիքի մարզի Նորատուս համայնքում: <<Նորատուսի ԲԱ >> ՊՈԱԿ-ը տեղակայված է 2001թ-ին Նորատուսի կենտրոնում համաշխարհային բանկի կողմից կառուցված տիպային շենքում: Ամբուլատորիան ապահովված է մշտական ջրով, ունի կոյուղի՝ առանձնացված սեպտիկ հորով: Ամբուլատորիան գազաֆիկացված է , ունի լոկալ ջեռուցման ցանց և ջեռուցվում է ամբողջությամբ: <<Նորատուսի ԲԱ >> ՊՈԱԿ-ը սպասարկում է Նորատուս համայնքի 5288 բնակչություն, որից մեծահասակ՝ 4155, երեխա՝ 1133:

Նորատուսի բժշկական ամբուլատորիայի նպատակն է որակյալ և անվտանգ ժամանակակից բուժօգնություն ցուցաբերել յուրաքանչյուր քաղաքացու :

Կազմակերպությունում անհրաժեշտություն կա ժամանակակից լաբորատոր սարքավորումների ձեռք բերման, ինչը թույլ կտա իրականացնել անալիզների շատ տեսակներ, ուստի նպատակահարմար է համարվում բիոքիմիական անալիզատրի ձեռք բերումը : Ամբուլատորիան կարիք ունի նաև նոր ԷԿԳ սարքի :

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել անցկացվող սկրինինգների վրա, որը հնարավորություն կտա վաղ հայտնաբերել հիվանդությունները և կարխարգելել դրանք: Պետք է խիստ ուշադրություն դարձնել երեխաների և մեծահասակների պատվաստումների գործընթացի վրա, որը կնպաստի երեխաների պատվաստումների ընդգրկվածության տոկոսի բարձրացմանը և վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը:

Առողջ ապրելակերպի , ճիշտ սնուցման ուսուցումը ծնողների շրջանում առողջության պահպանման առաջնային օղակի կողմից և հետագայում վերահսկումը էականորեն կբարելավի մինչև 18 տարեկան ազգաբնակչության առողջ ապրելակերպը:

Բնակչության սպասարկման որակի շարունակական աճի ապահովման համար անհրաժեշտ է անձնակազմի ամենամյա վերապատրաստման գործընթացը պահել մշտական ուշադրության կենտրոնում: Հնարավորության դեպքում կատարել փորձի փոխանակում այլ երկրներից ժամանած մասնագետների հետ: